

ները չեն ուղարկում զարդ: Ունեն դպրոց բայց ինչ տեսակ: Երբ անձրեղ գալիս է լցվում է դպրոցը ջրով, որ մի շաբաթից էլ հազիւ է կարողանում ցամաքել: Այն էլ ահա նոր են շինում, որ մի տարի է կիսատ է իրանց անհոգութեան և անտարբերութեան պատճառով: Սրանք եթէ ունենային սէր և զգացմունք դէպի լուսաւորութիւնը, դէպէ ուսումը, վաղուց վերջացրած կը լինէին իրանց նորակաւոյց ուսումնարանի շինութիւնը: Մեր գիւղացիք սիրում են ամեն մի նորութիւն ստեղծել կամ ունենալ իրանց մէջ: Բայց չեն աշխատում նրա ապահովութեանը, նրա պահպանելու համար: Գրանք մագնիսական բնաւորութիւն ունեն, ամեն բան շուտով կը քայեն իրանց, և շուտով էլ կը հրաժարվեն: Վերջապէս այդ բնաւորութիւնը կամ իրանց ասելուն պէս այդ խաւովը, մի նոր քաղաքական օրէնք են ընդունած: Ահա մօտ մի տարի է որ ես այս գիւղումն եմ, չեմ տեսել որ հոգաբարձուներից միւրը զայդ դպրոց և հոգաբարձուների տնտեսական պիտույքները, բացի հոգաբարձու պ. Վ. Ա. ից՝ եթէ որ պ. պ. հոգաբարձուները այդպէս հոգան դպրոցի համար, ապա հասարակութիւնը ինչ պէտք է անի, մինչդեռ նրա միջի խելքը և բան հասկացող անձինքներն էլ սրանք են: Եթէ որ գրանք այդ տեսակ են ձանաթում իրանց պարտականութիւնը դէպի դպրոցը, ապա ինչ կը հասկանայ հասարակութիւնը դպրոցի արժանաւորութիւնը, քանի որ նրանք ըստ մեծի մասին հովիւներ և երկարագործներ են: Մենք խօսելով մասնաւորապէս ֆարվանսարայի հասարակութեան վրա, չը գիտենք արդե՞ք թէ գրանք հասկանում են որ մարդս առանց ուսման չէ կատարեալ մարդ, չէ բանական արարած, մի խօսքով չէ ոչինչ աշխարհի մէջ:

Ես կարծում եմ որ գրանք եթէ հասկանային թէ ինչ է ուսումն և նրա օգտակարութիւնը, այն ժամանակը աւելի ջերմութեամբ կերպով կը դէմէին դէպի լուսաւորութիւնը, դէպի ուսումը, քան թէ այժմ: Գրանք ուղարկում են իրանց զաւակները դպրոց 5 կամ 6 ամիս ու պատուիրում են որ սեղ ու սպիտակը աշխատեն շուտ ձանաթել: Զարգանքը գրել սովորեն, գրել: Զնշել, այնպէս և Աստուած ողորմած է:

«Բարոյագիր գրելը, որդիք, դուք անումը կը սովորէք, դալամին դօռ տուէք», մի քանի ժամանակից յետոյ երբ տեսնում են որ իրանց զաւակները «Մայրենի լեզուից», չունը, նապաստակը և գաթան են կարգում, կարծում են թէ բոլոր ուսումը վերջացաւ, ուրախութեամբ իրանց երկաթալը հանում են ասելով թէ՝ «բոլ կարգալիք էլի, որդիք, տէրտէր իս չեմ չինելու ձեզ, ձերն հէնց այն էր որ կարենայիք գրել ևս առիկ են առիկ ուրիշ ոչինչ, մի բան էլ կայ որդիք, եթէ որ ձեզ էս տարի չէի դրկել չիօր, 10 թուամս խեր ունէի, դէ լաւ ա լաւ գնացէք, որդիք, խողերը տարէք մարաքը: Ահա այդ կերպ է համակրում մեր հասարակութիւնը դպրոցին, և

քաղցրանում էր մեզ համար — հպարտութիւն, գոռոգութիւն, ամբարտաւանութիւն, ինքնասիրութիւն և յանդգնութիւն: Այս բարձր յատկութիւններին չը մասնակցողը, չէր կարող կատարեալ համակրելու աշակերտ համարվել:

II

Գրանք այժմ դէպի մեր վերակայունները: Մեր վերակայուն պ. վարդապետն էր, կարճահասակ սեւ մօրուքով, սպիտակ ու գեղնագոյն մօրթով, մեղամաղձոտ, դուրս ցցված ուսերով, որոնց վրա կարծես արհեստական կերպով կարկատած էր թոյլ երեքուն գլուխը, Նա առաջին անգամ ներկայանում էր աչքին ամենաբարձր գիտնականը, մասնաւոր մի ամբողջ ուսումնարանի դէկան, եկեղեցի, սեղանատուն տանող բերող, այս ամենը իմ մանկական թոյլ նկատողութիւնը ենթադրելով, կարծում էի որ չեմ սկսված: Բայց այդ կեղծ դիմակը դէպի խաբէն էր գնում: Այդ սովորական չէր, այլ իսկապէս գուրկ էր բոլոր արժանաւորութիւններից — տգէտ, անհեռառն, դատողութիւններից թալ, հիւանդոտ և շատ չաղճաբար: Սա երբեմն էլ մեզ Ալամարեանցի գրաբար քրիստոնէական վարդապետութեան ուսուցիչն էր: Բնաւ մոռանալու չէ այն կտորը — «Եւ իւր պարտ է մեզ ձանաթել զԱստուած և Աւետարանից այն տունը — «Աւետեր Յովհաննէս Արքայի մարախ և մեղր վայրենի»: Նրանի կրօնաւորը առաջինը մեկնում էր, երբեք երբեք բանով, երկրորդը այսպէս՝ Յովհաննէս մորենները սպանում էր ու արեւ տակ տաքացնում ուսումը վայրենի մեղրն էլ մարդկային ցանկութեանց թուլացնելու համար էր: Շատ անգամ էլ ընկուզեմու լայն ու տախակ քանո-

այդպէս էլ մեր պատուելի հոգաբարձուները հոգում են դպրոցի տնտեսական պիտույքները: Ինչի մեր հասարակութեան մեծ մասը ռաւիկ է մնացել, ինչի մեր հասարակութիւնը անտարբեր է դէպի ազգային գործերը, ինչի մեր հոգաբարձուները զրանում են իրանց ազգասիրական եռանդից, դրա բուն պատճառն այն է որ մեր մէջ չը կայ հասարակական կրթութիւն:

Վարդան Եղիազարեանց

ՆՆՐԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՐԵՆԱՆՅՈՒՅ մեզ գրում են. «Առաւ անձրեւները պատճառով ազգիների մէջ ծաւերը բեռնաւորած են պտուղներով: Այս տարի երեսունմիւրդը շատ է ծան կը լինի: Հացը շատ թանգ չէ ծախվում, բայց գինին պղտորվում պատճառով թանգ է: Ս. Վայնանեան օրիորդաց դպրոցի քննութիւնները սկսվեցին մայիսի 29-ին: Թատրօնական բեմի շինութիւնը շարունակվում է, բայց դեռ չէ աւարտված:»

«Годъ Вѣстѣ» քաղցրը հաղորդում է, որ աշունքին թիֆլիսում կը հաւաքվին թիֆլիսի նահանգի ժողովրդական ուսուցիչները և փորձված մանկավարժների առաջնորդութեամբ կը կարգան փորձական դասեր: Այդ գործը, քաղցր կարծիքով, կարող է շատ լաւ հետեանք ունենալ, եթէ հասարակութիւնը ուղարկութիւն կը դարձնի:

ՄՕԶԻՕԿԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Հոգեւոր իշխանութեան տուած պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ Մօզլովը 1877 թվւին ունեցել է 450 հայ բնակիչ բաղկացած 2,100 հոգուց, որոնցից 1101 եղել են արական, իսկ 999 իգական: Արական ծնունդները թիւը եղել է 58, իսկ իգականներինը 60, բոլորը 118 հոգի: Պատկերի թիւը 26, վարձանակածների թիւը արական սեռի 43, իսկ իգականինը 42, բոլոր մեռածները 85 հոգի:» Նամակագիրը խոստանում է այս մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՆԵԼԵԱՆ ՀԱՐՅԸ ՆԻ ՖՐԱՆՍԻԱ

(Շարունակութիւն և վերջ)

«Փարիզ, 4 յունիս, 1878: Պարոն գեւական, երեկ ուղարկած էիք մեզ այն գեղականութիւնը որ գերմանական կառավարութիւնը,

նով աշակերտին խիբելու ժամանակ ասում էր. «Օրհնեալ է փայտն որով լինի արդարութիւն» և այս նախադասութեան հետ շարելով վարդապետական կոչ ու բերդ անկանները չրկացնում էր:

Ինչպէս ասացի, նա մի հիւանդոտ վարդապետ էր, և փակված կանքը շատ սիրելի էր նրա համար: Կիրակի օրերը մեզ համար նշանակված էր զբօսնելու տեղեր — անտառը, լճի եզրերը, գրկվում էինք շատ անգամ մեր այդ թանգ օրպէններից: Ինչու, որովհետեւ այդ օրերը երեք տեսակ կերակուրները չէր մարսում սորա ստամոքսը, փքված, քրքուրած որովայնը հանգստացնում էր անկողնակալի վրա զոնգով մեր առողջութիւնը: Ինչպէս հիւանդոտ փորին ու մասնաւոր էլ գինով ծանրացած ու դժուարացած զլինի:

Ընտրի տեսարան էր այն օրը, երբ ոտք էին կոխում անտառի կանաչ խոտերի վրա: Մեր ամենասիրելի խաղը գոտեմարտին էր, փոքրերի միմեանց հետ գոտեմարտիլը այնքան զգալի չէր որքան հերոսներինը: Այն օրը երբ դուք գոտեմարտելու լինէին, այդ ձայնը հասնում էր մինչև անգամ մօտիկ գիւղերը, ուստի գոտեմարտողները որոնք ինչպէս ասվում են «գիւղէվաններ» մասնակցում էին այդ հանդիսին բռնելու համար: Զարթուրում էին շատ անգամ մեր քաջ հերոսներին և այդ վրեժ օրինակը շատ նախանձելի էր լինում մեզ, մենք անդադար կրթվում էինք այդ վտանգաւոր խաղի վարժութիւններով չը յիշելով երկրորդական խաղերը: Չը նայելով որ երբեմնապէս վնաս էինք կրում այդ խաղից, այնու ամենայնիւ մեր սիրելին էր, խաղը, կամ այսպէս ասել, ոյժը այնքան քաղցր էր մեզ հա-

ւասոր: ունգարական կարինէտի ունեցած ինիցիատիվ համեմատ, ուղարկում է 1856-ի և 1871-ի գաշադիւններին ստորագրող առաջնորդներին, նրանց առաջարկելու համար որ կօնգրէսի հաւաքվին Բերլինում որպէս զէ այնտեղ վիճաբանվել Ռուսաստանի և թիւրքիայի մէջ Սան-Ստէֆանոյում հաստատված նախնական դաշնագրի պայմանների վրա: Նորին մեծութեան կառավարութիւնը առաջնութեամբ է նաև թէ ինքն այնպէս է համարում որ այդ հրաւերը ընդունելով, մենք հաւանում ենք Սան-Ստէֆանոյի դաշնագրի ամբողջութեան վրա ազատ վիճաբանութիւն ինքնուն և թէ պատրաստ ենք կօնգրէսին մասնակցելու: Ձեր այդ գեղեցումը յայտնեցի հանրապետութեան նախագահին, Ժողովի մէջ, և ինձ հրամայված է շուտով ձեռնաթուղթով Ֆրանսիական կառավարութեան արած որոշմանը հետ: Բերլինի կարինէտը գիտէ արդէն թէ այն րօպէին որ առաջին անգամ հարց բարձրացաւ մի կօնգրէսից կամ մի կօնգրէս գումարելու համար, մենք իսկոյն խոստացանք Ֆրանսիայի մասնակցութիւնը այդ գործին: Մենք ցանկանում էինք, որչափ կախված կը լինէր մեզանից, դիւրացնել խաղաղութեան վերահաստատվելը Ռուսաստանի և օսմանեան Պրան մէջ, ինչպէս և համաձայնութեան և ներդաշնակութեան պահպանվելու տէրութիւնների մէջ: Հրաւերը ընդունելու համար մենք պայման դրեցինք որ վերջին պատերազմից բնականապէս և ուղղակի ծագած հարցերը միայն ներկայացվէին կօնգրէսին: Մեր նկատողութիւնը աւելի որոշ և պարզ կերպով ցոյց տալու համար, և համոզված լինելով թէ եւրօպայի ճշմարիտ շահը պահանջում է կօնգրէսի խորհրդակցութիւնների առաջնորդ աւելի կարճացնել քան թէ լայնացնել, մենք յաւանք յանուանէ որոշ ցոյց տուեցինք թէ Նիքիտոսը, Սիրիան և սուրբ տեղերը պէտք չէ ենթարկվել վիճաբանութեան: Բերլինի կարինէտը յատկապէս ցոյց տալով թէ հաւատարմատարների աշխատութիւնը կը լինի Սան-Ստէֆանոյի դաշնագրի պայմանների վրա, նա որոշում և սահմանափակում է հաւատարմատարներին յանձնված պաշտօնը, այնպէս որ կատարեալ բաւականութիւն է տալիս մեր արած նկատողութիւններին: Ուրեմն Ֆրանսիական հանրապետութեան կառավարութիւնը ընդունում է ձեր արած հրաւերը և

մար, որ մինչև անգամ դրա վարժվելու համար առանձին մի տեղ ունենինք: Ռուսաւորութեան դիմացը արեւելահայաստանի կողմն ընկնող մեծ հրապարակը, որտեղ մինչև այսօր էլ հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսի ձեռնարանի համար փոքր տուած հիմքերը դեռ կան մեր վազվելու, խաղաղութեան, գոտեմարտելու, թուլելու ծանր քաղեր, 1825-ի Ռուսաստանի և Պարսկաստանի պատերազմի ժամանակից 6—7 փթանոց մնացած թիւղանօթի ուսմանը կշեռու փորձարան էր: Թէ և մեր ձեռքերի կաշին պլօկվում, պատուովում էր՝ դարձնում մեր ամենասիրելի առարկաներն էին: Զոգնած, զաղթած, քրտնած, հոգոտ, թողոտ բարձրանում էինք մեր ննջարանները ու մեր գլուխները հանգստացնում մեր երկաթեայ անկողնակալների կոշտ բարձրի վրա: Այն այսպէս էր մեր ամենօրեայ կեանքի չորջանը, — առաւօտը ժամը 4-ին եկեղեցի, դասատուն, ճաշին սեղանատուն, կրկին դասատուն, երեկոյեան եկեղեցի, սեղանատուն, «եկեցէ», մեր մեծ հրապարակը, անտառը և լճեր:

III

Երբեք երբեք տարին. մենք եօթ հոգով մեր հին մեծ ննջարանից բարձրացանք գեղամայի ստորին ննջարանը. փոխվելով նաև սրա հետ II դասարանը: Այդ դասարանը ջոկվում էր առաջինից հետեւալ առարկաներով — աւարտել քերականութիւնը, ճարտասանութիւնը, հայոց պատմութիւնը, Ալամարեանցի քրիստոնէական կան, շարականը, աշխարհագրութեան ուսումնական և քաղաքական մասը, թուրքաւորութեան հասարակ չորս գործողութիւնը, ուսուցիչից

ոչինչ առարկութիւն չունէ կօնգրէսի հաւաքվելու համար որոշված յունիսի 13-ի թւականի դէմ» (Նստ լաւ, շատ լաւ):

«Ճարակոյս չը կայ թէ կօնգրէսը կունենայ մի փափուկ և դժուար գործ կատարելու համար: Եթէ անցած մայիսի 9-ին ես հիմնաւոր յոյս ունէի թէ խաղաղութիւնը կը պահպանվի, այսօր կարող եմ ասել թէ այդ յոյսը այժմ գրեթէ ստուգութիւն է դառած: (Նստ լաւ, շատ լաւ): Իմ արած այս յայտարարութիւնը ցոյց է տալիս պարզապէս թէ կառավարութիւնը ինչ քաղաքականութիւն է ունեցել հինգ ամիս շարունակ: Ֆրանսիայի պատիւը, արժանաւորութիւնը, շահը պահպանված են, մենք աշխատած ենք միայն խաղաղութեան, Ֆրանսիայի չէզոքութեան և դաշնագրիների և եւրօպական շահերի յարգվելու համար: Արդէն ասած էի ձեզ այդ մայիսի 9-ին. յոյս ունեմ թէ այսօր հաստատեցի ասածս: (Նստ լաւ, շատ լաւ): Ուրեմն Ֆրանսիան անտարբեր չէ լինի կօնգրէսում: Նա չէ կարող իրան անտարբեր ցոյց տալ դէպի եւրօպական մեծ շահերը, այլ կը ներկայանայ կօնգրէսում այն ազդեցութեամբ որ ունեցել է հեռու մնալով որ և իցէ չափազանց և անյաբ ցանկութեանց և հաստատ կամք ունենալով պահպանելու համար խաղաղութիւնը և իր չէզոքութիւնը, մի և նոյն ժամանակ խորին զգացմունքով յարգելով եւրօպայի իրաւունքը: (Նստ լաւ, շատ լաւ): Ֆրանսիան կը յիշէ նաև թէ, բացի բոլորներից, այլ քրիստոնէաներ էլ կան Բաղկանեան թերակղզում, կան նաև ուրիշ ազգեր որոնք արժանի են եւրօպայի խնամքների: (Նստ լաւ, շատ լաւ): Ահա սրանք էին որ ուղում էի ես ասել խորհրդաբանին: Յոյս ունեմ որ խորհրդարանը կը հասնի այս քաղաքականութեան և այն րօպէին որ Ֆրանսիայի առաջին հաւատարմատարը կը գնայ Բերլին, իր քուէով կը տայ նրան հարկաւոր եղած ոյժը այդպիսի մի մեծ գործ կատարելու համար: (Փափահարութիւններ մի քանի անգամ) Յոյս ունեմ որ խորհրդաբանը, առանց կուսակցութիւնների խորութիւն անելու, ներշնչված Ֆրանսիայի շահերից որոնք միշտ մի և նոյն են, կը կամենայ իր հաւանութեամբ տալ ինձ այն ոյժը որին պէտք ունեմ»

Խորհրդարանը լսել է պ. Վադիկոսեանի խօսքերը ամենաերկիւղած լուրջութեամբ: Նրբ

«Другъ дѣтей» կարգը, թարգմանել ու միջի քերականական մասն բանիները ձանաթել: Ահա ամբողջ կուրսը: Ընթերցողի համար հետաքրքիր կը լինի հարցնել թէ այն հերոսները ուր գնացին երբ որ մենք տեղ բռնեցինք գեղամայում: Նոքա արժանացան ուրարին, իշան միաբանութեան շարքը իւրաքանչիւր մէկը առանձին իրեցերի մէջ փակվելով:

1864-ին վերակացու վարդապետն էլ փոխեց և սրա տեղը յաջորդեց «արդար Գալիթ» մականունով վարդապետը... Թողնեմ մի քանի րօպէ մեր նորեկ վերակացուին իր ննջարանում հանգստանալ մինչև իմ բաղադրեալ նախադասութիւն վերջացնելը: Գեղամայի մէջ ծանօթացանք մեր վաղուցվայ կարօտ գեղամայի դիրքերին, նաև մեղանից բարձր երկու ննջարանի աշակերտների հետ, մենք այնուհետեւ կրեցինք ցանկալի տխրոյս «գեղամայ աշակերտներ»: Հրապարտութեան, ինքնասիրութեան, գոռոգութեան և ամբարտաւանութեան ոգին օրից օր աճում, զարգանում էր մեզանում, այս նշանները մէկը միւսից բարձր աշակերտին շատ հակառակ էին, այդ աշակերտները մէջ առեկալութիւնը վերին ծայրահեղութեան էր հասած: Օրինակ, եթէ մեղանից մինը առանց վերաբրկու գեղամայի վրա երևար վերի ծայրում բնակվող հերոսներին, այն րօպէին նրանցից որպէս ամենաքաջը վերաբրկու հասնած, սպիտակ շապիկ թերթը մինչև բազկի կէտը յետ ծալած, կարմիր կամ բոլորաւունք ներկած ֆառը զլինի թէք դրած, կնձուած ձակաւով, խճված յօնքերով վարկնու պէս կը մտնէր ննջարանը առանց բարեկեց, յարձակողական գիրք ընդունած, ձախ թիւ կանթած, աջը մուշ-

վերջացրել է, միաձայն ծափահարութիւններ սկսել են ձախակողմում: Մի քանի ծափահարութիւններ նաև աջակողմում:

Յետոյ պ. Լէօն Բընօյտ ասում է: «Պատիւ ունեմ, պարոններ, իրեւ հետեանք այն խօսքերի որ այժմ լսեցիք և որոնք կատարեալ բաւականութիւն են տալիս մեզ, ձեզ առաջարկել մի այսպիսի օրակարգ, «Խորհրդարանը կատարեալ վստահութեամբ ընդունում է արտաքին գործերի միևնույն արած յայտարարութիւնները և տարակից չունելով որ նրա գործունէութիւնը կը լինի յօգուտ խաղաղութեան, Ֆրանսիայի չեզոքութեան և Եւրոպայի ընդհանուր շահերին, անցնում է իր օրակարգին» (Մափահարութիւններ):

Նրանից յետոյ պ. Դընթոյ ասում է հետեանք: «Նա մի հարցում արած լինելով որին նոյնպէս պատասխանած է պ. միևնույնը, իմ բարեկամների կողմից յայտարարում եմ թէ մենք էլ ընդունում ենք պ. Լէօն Բընօյտի ներկայացրած օրակարգը, համոզված լինելով, թէ արտաքին գործերի պ. միևնույնը քաղաքականութիւնը օգտաւոր կը լինի խաղաղութեան և համաձայն Ֆրանսիայի աւանդութիւններին: (Մափահարութիւններ ասեն նախարարներին վրա):

Քուէարկութիւն է լինում այդ օրակարգի համար և մէկ հակառակ ձայն անգամ չը արկելով, 195 քուէարկութիւններ միաձայնութեամբ ընդունվում է: (Մափահարութիւններ):

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԳ ԱԼ ՄԵՐ ԿՈՂՄԵՆ

Մոլեանից թիւրքերէ հրդեհում ու բարբարոս քեւրքերէ կողոպտուած, քերվուած ու մերկացած հայրենացա վրա կողբալի, և անհնարին կերպով յուսահատուած՝ ալ չէի կարծեր որ նա նորոգի, միևնույնի ու ապրի: Նա իմ կարէր մի այսպիսի յոյս տածել իր մէջ, նորա այն անօրինակ տառապանք ու զրկանք տեսնելով, որոյ նման ոչ ի հնունդն, ոչ ի միջնում և ոչ ի նորում գործուած էր: Ո՛վ կարէր յուսաւ երբ կը տեսնէր որ այն չարիքներ փոխանակ հեռոցհեռ թեթեւալու, կը ծանրանային առաւել ևս, և այն ձեռք որ կարող էր այս թշուառութիւններ կարծել, անտարբեր կը մնար թշուառաց աս-

տով պնդացրած սպառնում էր խեղճին անօրէն չըթուէնքնից արտասանելով անխնայ, նողմեալ արմատ, լիբը, այսպիսի անվայել բառերով կը թուանարէր կամ աստիկ հարուածներ իջեցնելով: Վերջին խօսքերը գոռաւով. «չը լինի չը լինի միւս անգամ»։ այսպէս էր հեռանում կատաղ գազանը: Թէև գանգատը կը հանէր վերակացուն, բայց անօգուտ: Նորիկ վերակացուն կեղծեցաւ, աղօթաւ, վեղարի ծայրերը աչքերի վրա իջեցրած, աչքերը միշտ գետնին, ձեռքերը կրծքին ձևաւոր էր որպէս մի անսպասակամ ճգնաւոր, այր բարեպաշտ, սուրբ և առաքինի: Խաբուսիկ ձևերը երեք չէին կարող նրան արգարացնել, մինչդեռ շատերին յայտնի էր նրա սենեակից պէտք է ստանային: Ի հարկէ այդ ամենալաւ միջոցն էր... չարունակ փոքրերը յաճախում էին այդ առիթով վերակացուի սենեակը: Մի քանի ամիսներից յետոյ մենք կարողացանք ծառանդել երկրորդ ննջարանը: Այդ աստիճանաբար բարձրանալով մեզ աւելի փառք ու պատիւ էր, երբ մեր միակ յայն էր վերի ննջարանը հասնել: Վստահ ասում եմ, ինչպէս շատ անգամ փորձով նկատում էի, որ ոչ մի ննջարանի աշակերտ մեզ պէս քաջասիրտ, ուժեղ ու գիտ չէին: Դէպի միւս աշակերտները, Այդ գլխաւորապէս նրա-

ղիկորմ հառաչանաց և արդար բողբոջներուն, անուղղակի քաջալեր կարգալով հարստահարողաց: Ո՛վ կարէր յուսաւ կասեմ, որ այս հայրենիք սպրեւ, քաղաքացւոյ նիւթական ու բարոյական ապաւէն հրոյ ճարակ տուած ու մեխի դարձած էր: Վիզաւցեցին հաց որ քաղաքացւոյն ալ բաժին էր, բոլորովին ձեռքէն խլուած, աշխատաւոր եզն ախօսին մէջ մորթութեամբ, ոչխար լեւեռներէ յափշտակուած, գէշ զեր դաշտերու մէջ աճիւն եղած, մարդոց և նոցա տաւարներու խրճիթներ կրակին կերակուր մասնուած էր, և եթէ կար խրճիթներու մի անկեան մէջ հողի տակ թաղուած տօպալով մը միւս տարուան համար սերմնացու ափ մը ցորեան, այն ալ ի բով ձգուած ու խաշուած էր, որպէս զի խեղճ հայ ժողովուրդ սովով մեռանի իր մահ իր աչքով տեսնելով: Այս ամենէ յետոյ ալ ինչ կար մեզ յուսալիք, մեր հոգեւոր ու բարոյական միւթաբարութիւններ ալ իսպառ վերցուած էր, եկեղեցիներ բոլորովին կողոպտուած, իր վայելչէն զարդերէն մերկացած, սրբութեան տեղեր պղծուած և ուրիշ անօրինակ չարութիւններով անտարբեր էր: Մեր կուսանաց և հարսանց պատիւ բռնաբարուած էր, չը կար մեկ որ զանոնք սփռէր և նոցա աղբիւրանման արտասուք սրբէր: Մեր աղքատիկ վարժանք, յորում կը հաւաքուէին մեր հայ մանուկներ իրենց մայրերի լեզուն ու կրօն ուսանելու և իրենց հոգեւոր հաց պատրաստելու, այս աղքատութեան ու բռնութեան երեսն իսպառ գոցուած էր: Խլուած էր խեղճերուն ձեռքէն նիւթական հացին հետ նա և բարոյական հաց, վանորդ և թշուառ մանկտին երկու քով ալ սովաւ կը թափառէր սիրտ ի լաց: Վերջապէս թշուառութիւն այնպէս տիրապետած էր մեր հայրենեաց վրայ, որ ինչպէս ասացինք վերջին ծայր յուսահատուած նրա մահուան կը սպասէինք ժամէ ի ժամ: Սակայն մեր այս յուսահատութիւն շուտով փարատեցաւ: Եւ շատ ուրախ եղանք Մշակոյ լրագրոյդ Եւ. Բ. համարին մէջ 4. Պոլսոյ Արարատեան ընկերութեան գործակալ կարգուած մեծ. Մկրտիչ Փորթուգալեանց առ ուսաստանցի հայ եղբարս ուղղեալ մի հրաւեր կարգաւոր, որ կը յորդորէր զանոնք Հայաստանի և հայրենիքի կեդրոն կողմ Վան քաղաքի մէջ բացուելիք կեդրոնական ուսումնարանին օգնական և գործակից լինելու որուն խիստ պէտք ունի այս-

նից էր կախված որ մեզանից շատերը գիւղացիներ էին, առողջ ու պինդ կազմված անպամ-նեղով, հակա, պարթեւ, ուժեղ, նաև բաւականին ընդունակ. սրա համար էլ իւրաքանչիւրիս սըր-տերում հանգստանում էր մի մի առիւծ: Մենք վարվում էինք աշակերտների հետ շատ քաղցր, հաւասար սրտով: Մեր մէջ վատ յատկութիւններից գլխաւոր տեղ բռնողները յանդգ-նաւորութիւնն էր ու անվեհերութիւնը... Մենք ստատիկ վրէժխնդիր էինք վերակացուների դուր-ծողութեանցը, և այդ պատճառով էլ մեր զգուշացը, խտրութիւնը, մեծ մեծ անբաւականութիւնները միշտ վերակացուների դէմ էին: Շատ չանցած այդ մեր թոյլ, անհզօ, կախարդ, կեղծ խաբեբայ ճգնաւոր «արդար Կալիթը իր մի քանի անբարեպաշտ արարածների համար եւ-թարկվեց մեր արդար բողբոջն ու կարողացանք յետ ուղարկել շուտով միաբանութեան շարքը: Մի քանի օրից յետոյ մենք ունեցանք մի այլ վերակացու Գ. վարդապետ, սա երկար ու բա-նից յետ ընկնելով. անցինք ու դուրս եկանք, և մի քանիսն էլ հետեցին մեզ: Այնուհետեւ նա աւելի կատաղաբար վարում էր իր միա-հեծան խիստութիւնը. ամեն մի չնչին պակա-սութեան համար այնպիսի անպակաս հարուած-ներ ու ապտակներ էին իջնում խեղճ աշակեր-տի վրա որի փափուկ թշերի վրա մատները կա-պտած տեղերն էին տպվում: Չը կար ոչ մի օր առանց ուղղուել, նրա ամենապարկիւ առաւելա-նկալ ծեծել: Նա շատ անգամ թշնամական աչ-քերով էր նայում մեր խմբի վրա, շատ անգամ պատրաստվում էր նուաճման տակ կաշկանդել մեզ: Նրա վերջին գլխաւոր պատճառը այս եղաւ,—

միջոցին այն թշուառ քաղաք և նոյն իսկ ամբողջ հայրենիք:

Նա ալ իմ աչքիս ուսաստանցի եղբայրներ, որոց աղքատութեան վրայ մեծ վստահու-թիւն ունիմ, թէպէտ և չունիմ յորդոր մը կարգաւոր այնպիսի հանձնար, և ոչ պերճաբա-նութիւն, ներկայ գործոյս մեծ կարեւորու-թեան ըստ պիտոյից ձեզ բացատրելու, սա-կայն զգացած անչափ ուրախութեան և աղ-գասիրութեան բոց, ի ներքուստ տաքցունե-լով կը ստիպէ զիս ըստ կարեաց քանի մը խօսք ալ իմ կողմէն արտասանելու:

Նկարագր իմ, դուք աղիկ գիտէք թէ ի՞նչ էր երբեմն հայ ազգ, և այժմ ի՞նչ թշուառ դրութեան մէջ կը գտնուէի, և մեք ամենքս նրա անկման վրա անտարբեր եմք, դուք կը տեսնէք որ մեզմէ շատ յետաժամաց ազգեր այսօր փրկութիւն ձեռք բերին, և մեք որ կը պարծնեմք իբրեւ հին մեծ ազգ մը, տակա-ւին ստրկութեան ու թշուառութեան շղ-թայնքու տակ կը հեծնեմք, ինչ բան կարող է լուծել: Թեթեւեղութեամբ մեր այս ժանգոտած շղթայները: Փոքրէն կը ցուցնեն որ ամենա-զօրաւոր միջոց ուսումն է: Ի՞նչու ուրեմն կը դանդաղեմք զայն ձեռք բերելու, եթէ իրօք կուզեմք որ փրկուեմք, եթէ ճշմարիտ է որ կը փափագեմք թէ մեր ազգի գոյու-թիւն շատ դարեր և թերեւ միշտ պահուի: Ի՞նչու կը դանդաղեմք կասեմ, մինչդեռ զայն ձեռք բերել այնչափ դժուար ալ չէ որ մեզ վախցունէ: Տեսաք ուրիշ ազգեր ինչ արին-հեղութեամբ և ուրիշ ինչ զոհերով գնեցին ազատութիւնը: Մեք մեր արեան տեղ չնշին ստակ զոհեմք, և այն ալ չեմ ասեր մեր կա-րեւորներէն կտրելով, այլ մեր աւելորդներէն մէն մի փոքրիկ մաս տալով, կարող եմք մեր այս նպատակին հասնել: Այո, ուսաստանցի եղբայրներ, եթէ դուք ձեր աւելորդ ծախսե-րէն մէկ մէկ շատ փոքրիկ մաս մը Արարատեան ընկերութեան այս փրկաւառ նպատակին տալու բարեհաճեմք մեծ գործ մը արած կը լինիք, և Հայաստան կունենայ յիսուս իւր փրկարան և դուք պիտի տեսնէք քիչ ժամա-նակէ մը յետոյ թէ ձեր այն աննշան զոհ ինչ արդիւնքներ յառաջ պիտի բերէ: Հայաստան իր փրկութեան համար շատ զոհերու պէտք ունի, առ այժմ որ այսպիսի աննշան զոհեր կը պահանջուի ձեզմէ հայեր, մի գլանայք իրեն, եթէ կը սիրեք զՀայաստան:

Շատ տարիներէ ի վեր Վանայ մէջ այս-

պիսի ուսումնարան մը կառուցանելու մեծ կարեւորութիւն զգացուած է զանազան ան-ձանց կողմէն, սակայն ցարդ տեղացի բնակ-չաց նիւթական կարտոնթեան պատճառաւ կարելի չեղաւ իրագործել: Կը յուսամք որ այժմ բարենպաստակ Արարատեան ընկերու-թիւն իր ուսաստանցի հայ եղբարց օգնու-թեամբ պիտի յաջողի ի գլուխ բերել զայն, որով կը նորոգուի ու կը սփռուի Հայաստան, և կազատուեն նորա որդիք բարոյական հա-ցի սովէն:

Վանցի

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐԼԻՆ, 13/25 յունիս: Կոնգրէսի նա-խագահը յայտնեց Յունաստանի արտաքին գործերի միևնույն Վեյմարին, որ Յունաս-տանին թող է տրվում մանակցել կոնգրէ-սին խորհրդակցական ձայնի իրաւունքով այն հարցերի մասին, որոնք Յունաստանի շահե-րին են վերաբերում: Թիւրքաց լիազօր հաւա-տարմատարները դեռ զեջող են բոլոր նշանա-ւոր հարցերի վերաբերութեամբ: Նոքա ցան-կութիւն են յայտնում որ հարաւային Բոլգա-րիայում փոխանակ միջոցա կազմելու, գա-ւառական պահապան ժանդարմների խումբ կազմվի տեղական բնակիչներից:

ԼՕՆՊՈՆ, 14/26 յունիս: Այստեղ ստաց-ված տեղեկութիւններին համեմատ կոնգրէ-սում հաւատարմատարները համաձայնել են, որ ուստաց գործերի միջոց ժամանակամի-ջոցը Թիւրքիայի նուաճած երկրներում լինի 9 ամիս, հաշուելով Սան-Ստեփանոյի դաշնա-գիրը կապելու օրից: Նրկիւնների կատարեալ դատարկելը վերջին երեք ամիսներում պէտք է կատարվի: Յոյս կայ, որ Բոլգարիայի հարցը առանց արգելքների կը վճռվի, դրանից յե-տոյ Լեւոպոլսի մասնագործ կը նշանակվի սահմանների որոշելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 15 յունիս: Ստացած տեղեկութիւններից երևում է, որ Կալեդով յունիսի 11-ին նշանաւոր փողոցային ան-կարգութիւններ են պատահել: Կալեդովները կտրտում էին հրեաների տները պատուհան-ները և դռները: Պոլսիային օգնելու համար կանչված էին գուսարներ, բայց գործերի գա-լուց առաջ կարգը վերականգնվեց տեղական միջոցներով: Զօրքերի և ժողովրդի մէջ կռիւ ու մահվան դեպքեր չեն պատահել:

մեր ննջարանը մտնելուն պէս նրա նկատողու-թեան տակ ընկաւ յատակի վրա կորիզներ մի քանի կեղծեր թափված: Գոռաց որ չը պէտք է այդ անմաքթութիւնը լինի: Նա առանց ջնջելու ծռակ չոքացրեց ամենքիս էլ նշանակելով մի ժամ մենք լուծվումք պահպանելու համար չընդ-դիմացանք, ինչպէս երևում էր չէր լսելու: Մի ժամից յետ ուսումնարանի ծառաները դաւար կա-պցում ճիպոտները ձեռքերին դաճի նման ներս մտան: Վերակացուի հրամանով նոքա ստիպեցին մեզ պառկել փափուկ ճիպոտները ուտելու համար: Մեր առաջին հարցն այս եղաւ. նրան բաւական չէր մի ժամ չոքել, մի աննշան պատճառի համար, այժմ էլ ուղղվե, ինչ բաւականութիւն: Վերակա-ցուս որպէս «փահչկվան» հանեց վերարկուն ու սկսեց ծառաների հետ ձեռք մեկնել մեզ ու մի մի պառկեցնել առանց երկար մտածելու... Նրա բռնակալութեան և մեր բարկութեան ծայրա-հեղութիւնները բարձր տատնանքի համար. առա-ջին հարուածը եւ տուեցի. փախան ծառաները ու մենք շատ համեստութեամբ պառկեցինք բռնակալին մի անկողնակալի վրա և մի փառա-ւոր հանդիսով «կտրատուր» տուն կատարե-ցինք: Բողբոջ սինդակալներին հանելով թէ և վեճեցին մեզ արտաքսել, բայց երբ լսեցին թէ բոլոր աշակերտներով արձակվելու են, նրա հա-մար ստիպված ցած տարան վերակացուին: Միշտ այդպէս է. ինչ տեղ բռնակալութեան ոգի է խաղում, այնտեղ առեղծութիւն, կռիւ, անհա-մաճարութիւն և շատ կոտորած կայ:

(Կը չարունակվի)


2-20

Խմբագիր Հրատարակիչ Արգար Յովհաննիսեան

25—24 (2)

1-3

1-3



Дворцовая улица № 3.

(332) 5-5.

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ